Քաղաքականություն
«Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանում»

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ

Փաստաթղթի նպատակը	• սահմանել պատասխանատու գործարար վարքագծի չափորոշիչները, ներդնել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը և զարգացնել այն, • ներկայացնել Ընկերության կողմից օրինականության, թափանցիկության և սոցիալական պատասխանատվության սկզբունքների պահպանման հանձնառությունը, • սահմանել կոռուպցիայի ցանկացած դրսևորումը կանխարգելելուն, ինչպես նաև Ընկերության կողմից աշխարհի ցանկացած երկրում տնտեսական գործունեություն իրականացնելիս կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանելուն ուղղված սկզբունքները: • բարձրացնել համապատասխանության կորպորատիվ մակարդակը, ինչպես նաև կոռուպցիայի ռիսկերին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը այն Անձանց շրջանում, ում վրա տարածվում են սույն Քաղաքականությունը, աջակցել կանոնների և նորմերի պարզաբանմանը և պահպանմանը:
Փաստաթղթի հակիրճ նկարագիր	• Սույն քաղաքականության նպատակն է՝ • սահմանել կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման, հայտնաբերման և դրանց նկատմամբ արձագանքման հիմնական սկզբունքներն ու պահանջները՝ կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջներին համապատասխան. • սահմանել Ընկերության ռիսկահեն մոտեցումը՝ պետական և մասնավոր հատվածներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, նվազեցման և շարունակական մոնիթորինգի համար. • խթանել բարեվարքության, էթիկական գործարար վարքագծի և կաշառակերության ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության մշակույթը Ընկերության բոլոր մակարդակներում. • սահմանել դերերն ու պատասխանատվության շրջանակները՝ Ընկերության հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի արդյունավետ իրականացման և շարունակական կատարելագործման նպատակով:
Մուտքի սահմանափակում	Չկա

ՆՓ-ի գործող տարբերակները ներկայացված են Ընկերության ներքին պորտալի «Նորմատիվային փաստաթղթեր» բաժնում: Համոզվեք, որ օգտվում եք փաստաթղթի գործող տարբերակից:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ 1

2. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ և ԴԵՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ 3

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 8

4. ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 9

5. ՀԻՆՄԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ 9

5.1. Կոռուպցիայի մերժումը բոլոր ձևերով և դրսեւորումներով 9

5.2. «Վերից հնչող և միջին տոն» 9

5.3. Հեղինակության ամրապնդում 10

5.4. Ռիսկերի պարբերական գնահատում և նվազեցում 10

5.5. Տեղեկատվություն և ուսուցում 10

5.6. Վերահսկողության միջոցների արդյունավետության մոնիթորինգ 10

5.7. Աուդիտ և վերահսկողություն 11

5.8. Պատասխանատու պաշտոնատար անձ և պատասխանատու ստորաբաժանում, հաշվետվություն 11

6. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ԳՈՏԻՆԵՐ 11

6.1. Փոխգործակցություն պետական պաշտոնյաների (ՊՊ) և պետական կազմակերպությունների հետ 12

7.2. Նվերներ և գործարար հյուրընկալություն 12

6.3. Հովանավորություն, բարեգործություն, նվիրատվություն և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 13

6.4. Մասնակցություն քաղաքական գործընթացներին 13

6.5. Վճարներ ֆորմալ գործընթացների պարզեցման համար 14

6.6. Վճարումներ միջնորդների միջոցով կամ ի շահ երրորդ անձանց 14

6.7. Շահերի բախում 14

6.8. Այլ ընկերություններում մասնակցության մասնաբաժնի ձեռքբերման և օտարման գործարքները 14

6.9. Պայմանագրային քաղաքականություն 15

6.9.1. Արտապայմանագրային հարաբերությունների արգելք 15

6.9.2. Կապալառուների ստուգումը 15

6.9.3. Հակակոռուպցիոն դրույթ 15

6.10. ՄԱՐՔԵԹԻՆԳ 16
6.11. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄ 16
7. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17
8. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 18
9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18
10. ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 19
10.1. Արտաքին փաստաթղթեր 19

2. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ և ԴԵՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1.Տերմինների և հապավումների սահմանումները

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
Ներկայացված սահմանումները՝		
Հակակոռուպցիոն դրույթ	ՀԿԴ	Կողմի/կողմերի պարտավորությունները, երաշխիքներն ու հավաստիացումները կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ:
Հակակոռուպցիոն համապատասխանություն (հակակոռուպցիոն համապատասխանության համակարգ)		Ընկերության կառավարման, քաղաքականությունների, ընթացակարգերի, վերահսկողական մեխանիզմների և այլ միջոցառումների միասնական համակարգ, որը նախատեսված է կաշառակերության և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, բացահայտման, արձագանքման և շարունակական բարելավման, Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանման, ինչպես նաև Ընկերությունում ազնվության և էթիկական գործարար վարքագծի մշակույթի ձևավորման և պահպանման համար:
Փոխգործակցություն Պետական պաշտոնյաների հետ		Ընկերության անունից կամ նրա գործունեության հետ կապված ցանկացած ուղղակի կամ անուղղակի հաղորդակցություն, հանդիպում, գրագրություն, բանակցություն, գործարք կամ այլ գործարար փոխգործակցություն՝ անկախ այն հանգամանքից, թե այն իրականացվում է անձամբ, էլեկտրոնային եղանակով կամ միջնորդի միջոցով, պետական պաշտոնատար անձի կամ պետական կազմակերպության հետ:
Պետական կազմակերպություն		Հայաստանի Հանրապետության կամ ցանկացած օտարերկրյա պետության պետական կամ հանրային իշխանության մարմին, նախարարություն, ծառայություն, գործակալություն, վարչություն, կարգավորող կամ վերահսկող մարմին, տեղական ինքնակառավարման մարմին կամ այլ պետական հիմնարկ, ինչպես նաև պետության կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանող կամ վերահսկվող ձեռնարկություն կամ այլ իրավաբանական անձ, ցանկացած քաղաքական կուսակցություն, պետական պաշտոնի թեկնածու և ցանկացած միջազգային հանրային կազմակերպություն:
Պետական պաշտոնյա	ՊՊ	Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության նշանակված կամ ընտրված ցանկացած անձ, որը զբաղեցնում է պաշտոն օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմիններում կամ միջազգային հանրային կազմակերպություններում, ինչպես նաև ցանկացած անձ, որը կատարում է պետական կամ հանրային գործառույթ պետական մարմնի, նախարարության կամ այլ պետական կառույցի անունից կամ շահերից ելնելով: Սույն հասկացությունը ներառում է նաև քաղաքական կուսակցությունների պաշտոնատար անձանց, ընտրովի պաշտոնների թեկնածուներին, դեսպաններին, պետական կամ պետության

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
		կողմից վերահսկվող կազմակերպությունների, բնական մենաշնորհների, ինչպես նաև պետական հիմնարկների (այդ թվում՝ առողջապահական, կրթական, ռազմական և համայնքային) ղեկավարներին և աշխատակիցներին, ինչպես նաև այդպիսի մարմինների անունից գործող անձանց կամ պետական պաշտոնատար անձի շահերից բխող անձանց: Սույն քաղաքականության նպատակներով, կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, հասկացությունը ներառում է նաև պետական պաշտոնատար անձանց ընտանիքի մերձավոր անդամներին և սերտ կապ ունեցող անձանց:
Դուստր ընկերություն	ԴԸ	Ընկերություն, որի նկատմամբ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն վերջինի կանոնադրական կապիտալում գերիշխող մասնակցության կամ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի և տվյալ ընկերության միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ կերպ կարող է մասնակցել տվյալ ընկերության կողմից որոշումների կայացմանը (այդ թվում՝ այն ընկերությունների, որոնցում «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն կամ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի աշխատակիցների որոշակի խումբ կարող են ներգրավել երրորդ անձանց՝ քվեարկման իրավունք ունեցող բաժնետոմսերին բաժին ընկնող ձայների փաստացի վերահսկողության համար, որոնք կազմում են ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 50%-ը):
Կաշառք		Ցանկացած ֆինանսական կամ այլ առավելության ուղղակի կամ անուղղակի առաջարկումը, խոստանալը, տրամադրումը կամ տրամադրումը թույլատրելը պետական պաշտոնատար անձին կամ ցանկացած այլ անձի՝ նրա ծառայողական կամ գործարար պարտականությունների ոչ պատշաճ կատարման վրա ազդելու, բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, անհիմն առավելություն ստանալու կամ ոչ իրավաչափ գործողություն կամ որոշում խրախուսելու նպատակով:
Գործարար հյուրընկալություն		Ընկերության ծախսեր, որոնք կապված են համագործակցության հաստատման և (կամ) պահպանման նպատակով իրականացվող գործնական միջոցառումներին մասնակցող այլ կազմակերպությունների (ներառյալ՝ արտասահմանյան) ներկայացուցիչների ընդունելության և սպասարկման հետ, ինչպես նաև համանման ծախսեր, որոնք կրում է մեկ այլ անձ Քաղաքականության մեջ նշված Անձանց փոխարեն: Գործարար հյուրընկալությունը ներառում է ներկայացուցչական ծախսերը և այլ «ընդունելության» ծախսերը: Գործարար հյուրընկալությանն ուղղված ծախսերը ներառում են. • բիզնես նախաճաշերը, ճաշերը և ընթրիքները, այդ թվում՝ պաշտոնական ընդունելությունները, նախուտեստները և խմիչքները, • գործնական նախաճաշերի, ճաշերի, ընթրիքների, մշակութային և ժամանցային կամ մասնագիտական միջոցառումների հետ կապված ուղեվարձը և կեցությունը, • մշակութային և ժամանցային միջոցառումների բոլոր ձևերը, ինչպիսիք են սպորտային, թատերական և մշակութային միջոցառումների հրավերները (տոմսերը) կամ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հովանավորությամբ կազմակերպվող միջոցառումները, • ծախսերը՝ կապված արտաքին մասնագիտական միջոցառումների հետ, ինչպիսիք են համաժողովները,

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
		առևտրային ցուցահանդեսները, ուսուցողական միջոցառումները և այլն:
Լիազորությունների չարաշահում		Անձի պաշտոնեական դիրքի, լիազորությունների կամ իրավասությունների ոչ պատշաճ կամ չարտոնված օգտագործումը՝ անձնական կամ այլ անձի շահերի համար, անհիմն առավելություն ստանալու, վնաս պատճառելու, պարտավորություններից խուսափելու կամ այլ կերպ Ընկերության կամ այլ կազմակերպության օրինական շահերին հակասող գործողություն կատարելու նպատակով՝ խախտելով կիրառելի օրենսդրությունը, Ընկերության ներքին քաղաքականությունները կամ էթիկական սկզբունքները:
Կոմերցիոն կաշառք		առևտրային կամ մասնավոր հատվածի կազմակերպությունում ղեկավար, գործադիր կամ այլ գործարար գործառույթներ իրականացնող անձին կամ նրա կողմից, անձամբ կամ միջնորդի միջոցով, ուղղակի կամ անուղղակի ձևով ցանկացած ֆինանսական կամ այլ առավելության առաջարկումը, խոստանալը, տրամադրումը, պահանջելը, ստանալուն համաձայնելը կամ ընդունումը՝ նրա պարտականությունների կատարման վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, անհիմն գործարար կամ անձնական առավելություն ստանալու կամ որևէ ոչ պատշաճ գործողություն, անգործություն կամ որոշում խրախուսելու նպատակով:
Ընկերություն		«Վիվա Արմենիա» ՓԲԸ, ներառյալ՝ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, մասնաճյուղերը, փոխկապակցված ընկերությունները, ներկայացուցչությունները:
Կապալառու		Ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ներառյալ անհատ ձեռնարկատերը, որը ներգրավված է Ընկերության անունից կամ շահերից ելնելով գործելու կամ Ընկերությանը ապրանքներ մատակարարելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով՝ անկախ նրանից, թե համագործակցությունն իրականացվում է գնումների գործընթացի շրջանակներում, թե դրանից դուրս: Սույն հասկացությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում, մատակարարներով, վաճառողներով, կապալառուներով, ենթակապալառուներով, դիստրիբյուտորներով, դիլերներով, անշարժ գույքի սեփականատերերով կամ վարձատուներով, մասնագիտական ծառայություններ մատուցողներով, խորհրդատուներով, գործակալներով, միջնորդներով և այլ գործարար գործընկերներով: Սույն քաղաքականության և Ընկերության պատշաճ ուսումնասիրության (Due Diligence) ընթացակարգերի նպատակներով, ցանկացած երրորդ անձ, որը ուղղակի կամ անուղղակի կերպով ստանում է վճարումներ՝ կապված Ընկերության գործունեության հետ, համարվում է Կապալառու, անկախ նրանից, հանդիսանում է արդյոք տվյալ անձը պայմանագրի անմիջական կողմ, թե ոչ:
Շահերի բախում		Իրավիճակ, երբ սույն քաղաքականությամբ կարգավորվող անձի ուղղակի կամ անուղղակի անձնական շահը, նրա հետ փոխկապակցված անձանց անձնական շահը, ինչպես նաև Ընկերությունից դուրս զբաղեցրած պաշտոնները, հարաբերությունները կամ գործունեությունը փաստացի, հնարավոր կամ ընկալվող կերպով ազդում են կամ կարող են

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
		ազդել նրա պարտականությունների, լիազորությունների կամ որոշումների օբյեկտիվ, անկախ և անաչառ իրականացման վրա՝ ի շահ Ընկերության:
Կոռուպցիա		Ցանկացած գործողություն, որը ներառում է ուղղակի կամ անուղղակի ձևով որևէ ֆինանսական կամ այլ առավելության առաջարկում, խոստում, տրամադրում, պահանջում, ստանալուն համաձայնություն կամ ընդունում, ինչպես նաև վստահված լիազորությունների, պաշտոնեական դիրքի կամ ազդեցության չարաշահում՝ պարտականությունների կատարման վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, անհիմն առավելություն ստանալու կամ սեփական կամ այլ անձի համար ոչ իրավաչափ օգուտ ապահովելու նպատակով: Կոռուպցիան ներառում է, սակայն չի սահմանափակվում, կաշառակերությամբ, առևտրային կաշառքով, արագացման վճարներով (facilitation payments), պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ, յուրացմամբ, խարդախությամբ, ազդեցության վաճառքով և կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությամբ արգելված այլ գործողություններով:
Ներքին նորմատիվային ակտ		Ընկերության ներսում վարվելակերպի պարտադիր նորմեր պարունակող փաստաթուղթ, որն Ընկերությունն ընդունել է իր իրավասության սահմաններում՝ օրենքներին և այլ կարգավորող իրավական ակտերին համապատասխան:
Ֆորմալ գործընթացների պարզեցման համար վճար		Ցանկացած ոչ պաշտոնական վճարում կամ այլ ֆինանսական կամ ոչ ֆինանսական առավելություն, որը ուղղակի կամ անուղղակի կերպով տրամադրվում է պետական պաշտոնատար անձին կամ ցանկացած այլ անձի՝ վարչական կամ պետական սովորական գործողության իրականացումը արագացնելու, հեշտացնելու կամ ապահովելու նպատակով, որի իրականացումն վճարողին օրենքով կամ այլ իրավական հիմքով արդեն իսկ հասանելի է, սակայն նման վճարումը չի թույլատրվում կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությամբ:
Նվեր		Ցանկացած իր, ծառայություն, արտոնություն կամ արժեք ներկայացնող այլ բարիք, որը առաջարկվում, տրամադրվում, ստացվում կամ ընդունվում է առանց համարժեք փոխհատուցման կամ դրա իրական շուկայական արժեքից ցածր պայմաններով: Նվեր կարող է համարվել, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, կանխիկ դրամը կամ դրան համարժեք միջոցները (եթե թույլատրվում է սույն քաղաքականությամբ), ապրանքները, նվեր քարտերը, զեղչերը, հյուրընկալությունը, ճանապարհածախսը, կեցության ծախսերը, ժամանցային միջոցառումների հրավերները կամ արժեք ներկայացնող ցանկացած այլ առավելություն:
Քաղաքական հովանավորչություն (քաղաքական գործունեության ֆինանսավորում)		Պետական կազմակերպություններին (այդ թվում՝ կուսակցություններին), նրանց աշխատակիցներին, Պետական պաշտոնյաներին կամ այդպիսի պաշտոնի թեկնածուներին աջակցելու նպատակով ցուցաբերվող դրամական կամ ցանկացած այլ տեսակի օգնություն:
Կաշառք ստանալը		Պետական պաշտոնատար անձի կողմից ուղղակի կամ անուղղակի, անձամբ կամ միջնորդի միջոցով, ցանկացած ֆինանսական կամ այլ առավելության պահանջումը, խնդրանքը, ստանալուն համաձայնելը կամ ընդունումը՝ պաշտոնեական գործողություն կամ պարտականություն կատարելու, հետաձգելու, դրա վրա ազդելու կամ այն չկատարելու, իր պաշտոնեական դիրքը կամ լիազորությունները չարաշահելու, անհիմն արտոնյալ վերաբերմունք ցուցաբերելու, անհիմն առավելություն ստանալու կամ տրամադրելու, կամ իր պաշտոնեական պարտականություններին կամ կիրառելի օրենսդրությանը հակասող այլ գործողություն կատարելու դիմաց:

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
Կաշառքի միջնորդություն		Կաշառքի առաջարկման, խոստման, տրամադրման, պահանջման, ստանալուն համաձայնելու կամ ընդունման գործընթացին ուղղակի կամ անուղղակի ցանկացած աջակցություն, ներառյալ կաշառակերության պայմանավորվածության կազմակերպումը, դյուրացումը, համակարգումը, փոխանցումը կամ դրա բանակցման, իրականացման կամ թաքցմանն ուղղված ցանկացած այլ աջակցություն՝ անկախ նրանից, թե անձը գործում է կաշառք տվողի, կաշառք ստացողի կամ որևէ այլ անձի անունից կամ շահերից ելնելով:
Առևտրային (կոմերցիոն) կաշառքի միջնորդություն		Առևտրային կաշառքի առաջարկման, խոստման, տրամադրման, պահանջման, ստանալուն համաձայնելու կամ ընդունման գործընթացին ուղղակի կամ անուղղակի ցանկացած աջակցություն, ներառյալ առևտրային կաշառքի պայմանավորվածության կազմակերպումը, դյուրացումը, համակարգումը, փոխանցումը կամ դրա բանակցման, իրականացման կամ թաքցմանն ուղղված ցանկացած այլ աջակցություն՝ անկախ նրանից, թե անձը գործում է առևտրային կաշառք առաջարկող, տրամադրող, պահանջող, ստացող կամ ընդունող անձի կամ որևէ այլ անձի անունից կամ շահերից ելնելով:
Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրություն		Հայաստանի Հանրապետության այն օրենսդրությունը, որը կարգավորում է կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների կանխարգելումը, բացահայտումը, քննությունը և հետապնդումը (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, ինչպես նաև կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող այլ կիրառելի օրենսդրությամբ), ինչպես նաև Միացյալ Նահանգների «Foreign Corrupt Practices Act» (FCPA), Միացյալ Թագավորության «UK Bribery Act 2010»-ը և հակակաշառակերության ու հակակոռուպցիոն ոլորտը կարգավորող այն պետությունների այլ կիրառելի օրենքներն ու իրավական ակտերը, որոնց տարածքում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը կամ որոնք այլ կերպ կիրառելի են Ընկերության գործունեության նկատմամբ:
Ներկայացուցչական ծախսեր		Կազմակերպության ծախսեր, որոնք կապված են համագործակցության հաստատման և (կամ) պահպանման նպատակով իրականացվող բանակցություններին մասնակցող այլ ընկերությունների (ներառյալ՝ արտասահմանյան) ներկայացուցիչների, ինչպես նաև Տնօրենների խորհրդի (Ղեկավարության) կամ Ընկերության այլ ղեկավար մարմնի նիստերին մասնակցելու համար ժամանած մասնակիցների ընդունման և սպասարկման հետ:
Աշխատակիցներ		Ընկերության հետ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքած ֆիզիկական անձինք:
Արժեք (արժեք ունեցող ցանկացած բան)		Այն ամենը (նյութական կամ ոչ նյութական), որ արժեք է ներկայացնում ստացողի համար: Արժեք կարող են հանդիսանալ ներառյալ, բայց չսահմանափակվելով. դրամական միջոցները, բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ ցանկացած այլ գույքի փոխանցումը, ծախսերի վճարումը, ցանկացած տեսակի ծառայությունների մատուցումը, նվերները, ճանապարհորդական փաթեթները, գործարար հյուրընկալությունը, աշխատանքի տեղավորումը, զեղչերը, պարտքի ներումը, ցանկալի հեռախոսահամարների («գեղեցիկ համարների») օգտագործումը, աշխատանքի և

Տերմին	Հապավում	Տերմինի սահմանում (հապավումների վերծանում)
		պրակտիկայի առաջարկները, այդ թվում՝ ընտանիքի անդամների համար, որոշակի բարեգործական կազմակերպություններին նվիրատվությունները, ապրանքների, ծառայությունների, նյութական կամ ոչ նյութական ակտիվների ցանկացած այլ փոխանցումը, ինչից օգտվում է ստացողը: Ցանկացած արժեք՝ անկախ գնից, կարող է ճանաչվել ապօրինի՝ կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության համաձայն:

2.2.Գործառույթների սահմանումները

Գործառույթի անվանումը	Գործառույթի սահմանումը
Ներկայացված սահմանումներ՝	
Չկա	Չկա
Կիրառվող սահմանումներ՝	
Անմիջական վերահսկիչ	Աշխատակցի անմիջական ղեկավար

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ընկերությունը որդեգրում է **կաշառակերության և կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության** սկզբունքը՝ անկախ դրանց դրսևորման ձևից: Կաշառակերությունն ու կոռուպցիան անհամատեղելի են Ընկերության արժեքների, ազնվության և էթիկական գործարար վարքագծի սկզբունքների հետ, Ընկերության և սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձանց համար ստեղծում են էական իրավական, ֆինանսական և հեղինակային ռիսկեր, ինչպես նաև խաթարում են արդար մրցակցությունն ու հանրային վստահությունը:

Սույն Քաղաքականությունը սահմանում է Ընկերության սկզբունքներն ու նվազագույն պահանջները՝ կաշառակերության և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման, բացահայտման և դրանց արձագանքման նպատակով և հանդիսանում է Ընկերության **Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի** անբաժանելի մասը:

Սույն Քաղաքականությունը չի փոխարինում և չի գերակայում **Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության** պահանջներին: Սակայն այն կարող է սահմանել լրացուցիչ կամ ավելի խիստ պահանջներ:

Եթե **Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությամբ** սահմանված են սույն Քաղաքականությամբ նախատեսված պահանջներից ավելի խիստ կամ լրացուցիչ պահանջներ, ապա կիրառվում են **Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության** պահանջները:

Ընկերությունը սահմանում, ներդնում և պահպանում է համապատասխան քաղաքականություններ, ընթացակարգեր, վերահսկողական մեխանիզմներ և որոշումների կայացման գործընթացներ՝ **Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության** և սույն Քաղաքականության պահանջների պահպանումն ապահովելու նպատակով: Ընկերությունը նաև նպաստում է համարժեք հակակոռուպցիոն ստանդարտների և վերահսկողական մեխանիզմների ներդրմանը իր վերահսկվող դուստր ընկերություններում և գործադրում է ողջամիտ ջանքեր՝ խրախուսելու համադրելի ստանդարտների ընդունումն այն կազմակերպությունների կողմից, որոնց նկատմամբ վերահսկողություն չի իրականացնում:

Սույն Քաղաքականությամբ կարգավորվող ոչ մի անձ իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի կերպով, այդ թվում՝ **Կապալառուի** կամ որևէ այլ երրորդ անձի միջոցով, մասնակցելու,

թույլատրելու, հանձնարարելու, դյուրացնելու կամ գիտակցաբար հանդուրժելու կաշառակերության, կոռուպցիայի կամ սույն Քաղաքականությամբ արգելված որևէ այլ վարքագիծ:

Սույն Քաղաքականությունը պարտադիր է՝

- Ընկերության բոլոր աշխատակիցների համար,
- Ընկերության կառավարման և այլ ղեկավար մարմինների անդամների համար (ներառյալ՝ Տնօրենների խորհուրդը, Տնօրենների խորհրդին կից կոմիտեները և Գլխավոր տնօրենը),
- **Կապալառուների** համար՝ նրանց հետ կնքված պայմանագրերով (համաձայնագրերով) նախատեսված չափով:

Սույն Քաղաքականության նպատակներով բոլոր այն անձինք, որոնց համար պարտադիր է սույն Քաղաքականության պահանջների պահպանումը, այսուհետ միասին կկոչվեն **«Սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձինք»**:

Սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձինք հաստատում են, որ ծանոթացել են սույն Քաղաքականությանը, հասկացել են դրա պահանջները և համաձայնում են պահպանել դրանք՝ Ընկերության կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան, ներառյալ՝ կիրառելի օրենսդրությամբ և Ընկերության ներքին ընթացակարգերով թույլատրված դեպքերում էլեկտրոնային եղանակով:

4. ԿԻՐԱՌԵԼԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Քաղաքականությունը մշակվել է **Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության** պահանջներին համապատասխան և հանդիսանում է Ընկերության **Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի** անբաժանելի մասը: Սույն Քաղաքականությունը պետք է մեկնաբանվի և կիրառվի Ընկերության Կանոնադրության, **Գործարար վարքագծի և էթիկայի կանոնագրքի**, ինչպես նաև Ներքին նորմատիվային փաստաթղթերի (LR) հետ համատեղ:

5. ՀԻՆՄԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ընկերությունը հետևում է հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման և էթիկական վարքագծի սկզբունքներին բոլոր տեսակի գործնական հարաբերություններում և անկախ այն երկրից, որի տարածքում Ընկերությունը ծավալում է իր տնտեսական գործունեությունը: Ընկերությունն ակնկալում է, որ Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությունը պետք է պահպանվի ընկերության շահերից կամ նրա անունից գործող բոլոր անձանց կողմից:

5.1. Կոռուպցիայի մերժումը բոլոր ձևերով և դրսեւորումներով

Ընկերությունը բացահայտորեն հայտարարում է ցանկացած ձևի կոռուպցիայի մերժման մասին և այն անձանցից, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը, պահանջում է անվերապահորեն համապատասխանել Քաղաքականության հիմնական սկզբունքներին և պահանջներին:

5.2. «Վերից հնչող և միջին տոն»

Ընկերության ղեկավարությունը, անկախ մակարդակից, ներառյալ՝ կառավարման մարմինների անդամները, իրենց ծառայողական և (կամ) կորպորատիվ պարտականությունները կատարում են ողջամիտ և բարեխղճորեն՝ առաջնորդվելով

բարձրագույն մասնագիտական և էթիկական ստանդարտներով, իրավական նորմերով և կորպորատիվ կառավարման լավագույն փորձով՝ Ընկերության շահերը վեր դասելով իրենց շահերից:

Ընկերության Տնօրենների խորհրդի և Ընկերության ղեկավարության անդամներն իրենց օրինակով պետք է սահմանեն բարձր էթիկական վարքագծի չափորոշիչներ և ձևավորեն կոռուպցիայի ցանկացած ձևերի և դրսևորումների մերժում այն անձանց մոտ, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը: Դա հանդիսանում է Ընկերության կորպորատիվ մշակույթի և առօրյա գործարար փորձի անբաժանելի մասը:

Ընկերության Տնօրենների խորհուրդը և ղեկավարությունը՝ անկախ կառավարման մակարդակից, պարտավոր են ցուցաբերել առաջնորդություն և հանձնառություն Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի նկատմամբ, ապահովել դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ և բավարար ռեսուրսների հատկացումը, իրականացնել ծրագրի ներդրման և արդյունավետության նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև նպաստել դրա շարունակական կատարելագործմանը:

5.3. Հեղինակության ամրապնդում

Ընկերությունը խելամիտ ջանքեր է գործադրում, որպեսզի կանխարգելի Ընկերության ղեկավար պաշտոններում կամ կառավարման մարմիններում այնպիսի անձանց ընդգրկումը, ովքեր ներգրավված են եղել կամ ներգրավված են անօրինական գործունեության մեջ կամ իրականացրել են այնպիսի գործողություններ, որոնք հակասում են Ընկերության կողմից սահմանված էթիկական չափանիշներին:

5.4.Ռիսկերի պարբերական գնահատում և նվազեցում

Ընկերությունն ամեն տարի աշխատանք է իրականացնում կոռուպցիոն ռիսկերը հայտնաբերելու, գնահատելու և վերագնահատելու ուղղությամբ, որի արդյունքների հիման վրա մշակվում և ներդրվում են կոռուպցիայի դեմ պայքարի ընթացակարգեր, որոնք խելամտորեն և համամասնորեն համապատասխանում են բացահայտված ռիսկերի մակարդակին և բնույթին:

5.5. Տեղեկատվություն և ուսուցում

Ընկերությունը մշտապես հետևում է Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության փոփոխություններին և պատշաճ ժամանակին տեղեկացնում է բոլոր շահագրգիռ անձանց համապատասխան փոփոխությունների և միտումների մասին::

Ընկերությունը իրականացնում և օժանդակում է Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների և Ընկերությունում կիրառվող համապատասխանության վերահսկողության միջոցների վերաբերյալ ուսումնական ծրագիր այն անձանց համար, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը:

5.6. Վերահսկողության միջոցների արդյունավետության մոնիթորինգ

Ընկերությունը իրականացնում է կոռուպցիայի կանխարգելման համար ներդրված վերհսկողության միջոցների արդյունավետության մոնիթորինգ, վերահսկում դրանց պահպանումը և, անհրաժեշտության դեպքում, կատարելագործում է դրանք:

Ընկերությունն ամեն տարի միջոցներ է ձեռնարկում վերանայելու համապատասխանության վերհսկողության միջոցների համապատասխանությունը և թարմացնելու այդ միջոցների մասին Ներքին նորմատիվային փաստաթղթերը:

5.7. Աուդիտ և վերահսկողություն

Ընկերությունն ապահովում է ֆինանսատնտեսական գործունեության ներքին և արտաքին աուդիտի կանոնավոր կերպով իրականացումը, ինչպես նաև իրականացնում է անընդմեջ վերահսկողություն հաշվապահական հաշվետվություններում բոլոր տնտեսական գործարքների ամբողջական և ճշգրիտ արտացոլման նկատմամբ, ինչպես նաև Կիբառելի հակակոռուպցիոն օրենսդրության և Ընկերության ներքին նորմատիվային իրավական ակտերի պահանջների պահպանման, այդ թվում՝ սույն Քաղաքականությամբ սահմանված հիմնական սկզբունքների և պահանջների պահպանման նկատմամբ:

5.8. Պատասխանատու պաշտոնատար անձ և պատասխանատու ստորաբաժանում, հաշվետվություն

Համապատասխանության ղեկավարն (Head of Compliance) պատասխանատու է Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրման, պահպանման և շարունակական կատարելագործման համար: Նա պետք է ունենա իր գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ փորձը, մասնագիտական գիտելիքները և կարողությունները, ինչպես նաև բավարար անկախություն, լիազորություններ և ռեսուրսներ:

Համապատասխանության ղեկավարը, ինչպես նաև նրա կողմից համապատասխան լիազորություններ ստացած անձինք, անհրաժեշտության դեպքում կարող են մասնակցել Ընկերության կոլեգիալ կառավարման մարմինների նիստերին, ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ինչպես նաև համապատասխանության վերաբերյալ դիրքորոշումն ու առաջարկությունները՝ կոլեգիալ կառավարման մարմինների անդամներին՝ ռազմավարական և գործառնական մակարդակներում տեղեկացված որոշումների կայացմանն աջակցելու նպատակով:

Համապատասխանության ղեկավարն իրավունք ունի ցանկացած ժամանակ և իր հայեցողությամբ դիմելու Ներքին վերահսկողության և աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահին՝ Տնօրենների խորհրդի քննարկմանը ցանկացած հարց ներկայացնելու նախաձեռնությամբ:

Համապատասխանության ղեկավարը և Համապատասխանության թիմը վերահսկում են սույն Քաղաքականության և Կիբառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանումը, իրականացնում են Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ամենօրյա կառավարումն ու շարունակական կատարելագործումը, ինչպես նաև մասնակցում են բարձր կոռուպցիոն ռիսկ ունեցող գործարքների համաձայնեցման գործընթացին:

6. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ԳՈՏԻՆԵՐ

6.1. Փոխգործակցություն պետական պաշտոնյաների (ՊՊ) և պետական կազմակերպությունների հետ

Պետական պաշտոնատար անձանց և պետական կազմակերպությունների հետ փոխգործակցությունը բնութագրվում է կաշառակերության և կոռուպցիայի ավելի բարձր ռիսկով, ուստի այն պետք է իրականացվի առավել բարձր թափանցիկության, ազնվության և պատշաճ վերահսկողության պայմաններում՝ սույն Քաղաքականության, Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության և Ընկերության ներքին կարգավորող փաստաթղթերի պահանջներին խիստ համապատասխան:

Ընկերությանը և սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձանց արգելվում է ուղղակի կամ անուղղակի կերպով պետական պաշտոնատար անձին կամ պետական կազմակերպությանը առաջարկել, խոստանալ, տրամադրել կամ այլ կերպ փոխանցել որևէ ֆինանսական կամ այլ առավելություն՝ պաշտոնեական որևէ գործողության կամ որոշման վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, ինչպես նաև Ընկերության համար բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու, կամ որևէ այլ անհիմն գործարար կամ այլ առավելություն ստանալու նպատակով:



Խստիվ արգելվում է ուղղակի կամ անուղղակի կերպով պետական պաշտոնատար անձին առաջարկել, խոստանալ, տրամադրել կամ այլ կերպ տրամադրել որևէ ֆինանսական կամ այլ առավելություն՝ պաշտոնեական որևէ գործողության կամ որոշման վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու, ինչպես նաև բիզնես ձեռք բերելու կամ պահպանելու կամ որևէ այլ անհիմն գործարար կամ այլ առավելություն ստանալու նպատակով:

7.2. Նվերներ և գործարար հյուրընկալություն

Նվերները և գործարար հյուրընկալությունը կարող են ծառայել օրինական գործարար նպատակների, այդ թվում՝ մասնագիտական հարաբերությունների ձևավորմանն ու պահպանմանը: Սակայն դրանք կարող են նաև օգտագործվել որոշումների վրա ոչ պատշաճ ազդեցություն գործադրելու նպատակով և, որոշակի հանգամանքներում, համարվել կաշառք կամ առևտրային կաշառք:

Սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձինք չպետք է առաջարկեն, տրամադրեն, պահանջեն կամ ընդունեն նվերներ կամ գործարար հյուրընկալություն, որոնք կարող են ոչ պատշաճ կերպով ազդել կամ այնպիսի տպավորություն ստեղծել, թե ազդում են գործարար կամ պաշտոնեական որոշումների վրա, առաջացնել շահերի բախում կամ ստեղծել շահերի բախման տպավորություն:

Նվերների կամ գործարար հյուրընկալության օգտագործումը որպես կաշառակերության, առևտրային կաշառքի կամ ցանկացած այլ կոռուպցիոն գործողության միջոց խստիվ արգելվում է: Նվերների կամ գործարար հյուրընկալության պահանջումը կամ շորթումը նույնպես խստիվ արգելվում է:

Նվերներ տալն ու ստանալը թույլատրվում է համապատասխան Ներքին նորմատիվային ակտում նշված սկզբունքների պահպանման դեպքում:

6.3.Հովանավորություն, բարեգործություն, նվիրատվություն և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Ընկերությունը հանձնառու է աջակցելու կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (CSR) նախաձեռնություններին և նպաստելու հասարակության կայուն զարգացմանը՝ թափանցիկ և պատասխանատու հովանավորության, բարեգործական նվիրատվությունների և այլ սոցիալական նախաձեռնությունների միջոցով:Ընկերությունը չի ֆինանսավորում և որևէ այլ կերպ չի մասնակցում բարեգործական և (կամ) հովանավորման գործողություններին՝ բիզնեսի հետ կապված որևէ անօրինական առավելություն կամ նախապատվություն ստանալու համար:

Ընկերությունը մշակել և ներդրել է հովանավորության և բարեգործական գործունեության մեջ Ընկերության մասնակցությունը կարգավորող ընթացակարգեր:

Հովանավորության, բարեգործության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առավել մանրամասն պահանջները ներկայացված են PL-ARM-080 ««Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում», PL-ARM-082 ««Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի Սոցիալական ներդրումների նախագծերը» PR-ARM-138 «Հովանավորման նախագծերի կազմակերպումը» քաղաքականություններում և գործընթացի կանոնոկարգում:

Արգելվում է բարեգործության, հովանավորության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բնագավառում գործունեությունը՝ անօրինական ազդեցություն գործադրելու նպատակով:

6.4. Մասնակցություն քաղաքական գործընթացներին

Ընկերությունը չի ֆինանսավորում կամ որևէ այլ կերպ չի աջակցում կամ խրախուսում քաղաքական կուսակցություններին կամ նրանց անդամներին, ներառյալ՝ քաղաքական պաշտոնի թեկնածուներին, նրանց նախընտրական արշավներին կամ քաղաքական իրադարձություններին կամ որևէ քաղաքական կազմակերպությանը կամ շարժմանը: Ընկերությունն արգելում է քաղաքական նպատակներով որևէ վճարում կատարել:

Ընկերությունը չի արգելում Աշխատակիցների մասնակցությունը քաղաքական գործունեությանը, եթե դա չի հակասում Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրությանը, և եթե Աշխատակիցները չեն օգտագործում Ընկերության գույքն ու անվանումը նման գործունեության մեջ: Եթե Աշխատակիցը հավակնում է կամ ընտրվել/ նշանակվել է Պետական կազմակերպության պաշտոնում և մտադիր է զբաղեցնել այդ պաշտոնը, ապա Աշխատակիցը նախ պետք է այդ մասին տեղեկացնի Ընկերությանը՝ PL-ARM-506 «Շահերի բախման կառավարումը» քաղաքականության համաձայն:

Ընկերությունը չի ֆինանսավորում և չի մասնակցում քաղաքական գործունեությանը:

6.5. Վճարներ ֆորմալ գործընթացների պարզեցման համար

Արգելվում է կատարել վճարներ կամ տալ այլ առավելություններ, որոնք նախատեսված չեն գործող օրենսդրությամբ, և առաջարկվում են սովորական ընթացակարգի (գործողության) իրականացումն արագացնելու կամ պարզեցնելու նպատակով, որի նկատմամբ Ընկերությունն ունի իրավունք՝ օրենսդրական, պայմանագրային կամ այլ հիմքերով:



Արգելվում է ֆորմալ գործընթացների պարզեցման համար ցանկացած վճարում:

6.6.Վճարումներ միջնորդների միջոցով կամ ի շահ երրորդ անձանց

Արգելվում է երրորդ անձանց օգտին վճարումներ կատարել, եթե հայտնի է կամ կան որոշակի հիմքեր ենթադրելու, որ այդ ամբողջ վճարումը կամ դրա մի մասը կօգտագործվի կոռուպցիայի նպատակով:

Ընկերությունն իրավասու է ընթացակարգեր իրականացնել ցանկացած երրորդ անձանց առնչությամբ՝ կոռուպցիոն գործունեության մեջ Ընկերության ներգրավվածության ռիսկերը կանխելու և (կամ) բացահայտելու համար:



Կոռուպցիոն վճարումներն արգելվում են:

6.7. Շահերի բախում

Ընկերությունը հանձնառու է կանխելու և պատշաճ կերպով կառավարելու շահերի բախման իրավիճակները: Ընկերությունը չի հանդուրժում որևէ իրավիճակ, երբ սույն Քաղաքականությամբ կարգավորվող անձի ուղղակի կամ անուղղակի անձնական շահը ազդում է կամ կարող է ազդել իր պարտականությունների կամ լիազորությունների օբյեկտիվ, անկախ և անաչառ կատարման վրա

Այն անձինք, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը, պարտավոր են պահպանել շահերի բախման կանոնները, որոնք շարադրված են PL-ARM-506 «Շահերի բախման կառավարումը» քաղաքականությունում:



Շահերի բախումները ենթակա են պարտադիր կարգավորման:

6.8.Այլ ընկերություններում մասնակցության մասնաբաժնի ձեռքբերման և օտարման գործարքները

Ցանկացած իրավաբանական անձին առնչվող միաձուլումներ և ձեռքբերումներ իրականացնելու և (կամ) մասնակցության մասնաբաժնի ձեռքբերում/ վաճառք իրականացնելու համար Ընկերությունը հատուկ կանոններ է սահմանել Կիրառելի

հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները պահպանելու նպատակով, ներառյալ՝ հակակոռուպցիոն ստուգման ընթացակարգը: Նման գործարքը գնահատելիս Ընկերությունն ուսումնասիրում է գործարքի առարկայի և (կամ) գործընկերոջ գործունեությունը՝ այդպիսի ընկերության կամ գործընկերոջ կողմից ավելի վաղ կատարված կոռուպցիոն գործողություններին մասնակցության ռիսկերը հայտնաբերելու համար: Այս աշխատանքը ներառում է, բայց չի սահմանափակվում, գործարքի կնքումից առաջ պատշաճ ստուգման համապարփակ գործընթացով, ինչպես նաև ակտիվների ձեռքբերումից հետո ինտեգրման գործընթացի շրջանակներում կատարվելիք գործողությունների սահմանումով:

Այլ ընկերություններում մասնակցության մասնաբաժինների ձեռքբերման կամ վաճառքի գործարքները ենթակա են պարտադիր հակակոռուպցիոն փորձաքննության:

6.9.Պայմանագրային քաղաքականություն

6.9.1. Արտապայմանագրային հարաբերությունների արգելք

Ընկերությունն արգելում է իր անունից կամ իր շահերից ելնելով գործող օրենսդրությամբ կամ Ներքին նորմատիվային ակտերով չնախատեսված ցանկացած պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել Կապալառուների ցանկացած կատեգորիայի հետ, այդ թվում՝ ցանկացած բանավոր կամ գրավոր համաձայնությունների, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, որոնք ներառված չեն Կապալառուի հետ հիմնական պայմանագրում կամ դրա հավելվածներում, կամ այլ տեսքով, և չեն անցել Ընկերությունում համաձայնեցման ընդունված ստանդարտ ընթացակարգերը:

Ընկերության կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կնքված ցանկացած պայմանագիր կամ համաձայնագիր պետք է պարունակի այն պայմանների և համաձայնությունների ամբողջությունը, որոնց հիման վրա կնքվում է այդ պայմանագիրը կամ համաձայնագիրը:

6.9.2. Կապալառուների ստուգումը

Կապալառուների հետ հարաբերություններում Ընկերությունն իրականացնում է բարեվարքության և հակակոռուպցիոն գնահատման (integrity and anticorruption due diligence) գործընթաց՝ Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանման, կաշառակերության, կոռուպցիայի, շահերի բախման, պատժամիջոցների և բարեվարքությանը վերաբերող այլ ռիսկերի բացահայտման և գնահատման, ինչպես նաև Ընկերության՝ ուղղակի կամ անուղղակի կերպով անօրինական կամ ոչ էթիկական գործունեության մեջ ներգրավվելու ռիսկի կանխարգելման նպատակով:

Ընկերությունն ակնկալում է, որ իր Կապալառուները կպահպանեն Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև Ընկերության կիրառելի ներքին կարգավորող փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև ազնվության և էթիկական գործարար վարքագծի ընդհանուր ընդունված սկզբունքները՝ ինչպես գնումների գործընթացի ընթացքում, այնպես էլ Ընկերության հետ գործարար հարաբերությունների ամբողջ ընթացքում:

Կապալառուների նկատմամբ բարեվարքության և հակակոռուպցիոն գնահատումն իրականացվում է Ընկերության կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան: Ավելի մանրամասն պահանջները սահմանված են PR-ARM-016 «Contractors_Info_Assessment» և PR-ARM-126 «Third parties anti-corruption check» ընթացակարգերով:

6.9.3. Հակակոռուպցիոն դրույթ

Կապալառուի կողմից կոռուպցիոն ռիսկը նվազագույնի հասցնելու համար Ընկերությունն իրավունք ունի նախաձեռնել հակակոռուպցիոն դրույթի (ՀԿԴ) ներառումը Կապալառուների ստուգման արդյունքների հիման վրա կնքվող պայմանագրերում/ համաձայնագրերում:

Հակակոռուպցիոն դրույթին վերաբերող պահանջներն ավելի մանրամասն ներկայացված են PR-ARM-164 «Պայմանագրային աշխատանքի կազմակերպումը» գործընթացի կանոնակարգում:



Կապալառուների հետ փոխգործակցությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով և պարտադիր ստուգմամբ՝ համաձայն Ընկերության Ներքին նորմատիվային ակտերի:

6.10. ՄԱՐՔԵԹԻՆԳ

Ընկերությունն իրականացնում է մարքեթինգային միջոցառումներ հաճախորդների հավատարմությունը գրավելու, պահպանելու և բարձրացնելու համար:

Մարքեթինգային միջոցառումներն արգելվում են, եթե դրանց նպատակն է.

- տնտեսական գործունեության հետ կապված ցանկացած անօրինական առավելության կամ նախապատվության ստացումը,
- վարձատրության վճարումը ՊՊ-ին, առևտրային կազմակերպության ներկայացուցչին կամ ցանկացած այլ անձի՝ վերջիններիս գործողությունների վրա ազդելու (անգործությունն ապահովելու) և դրդելու պաշտոնեական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, և/կամ անհիմն առևտրային առավելություն ստանալու նպատակով:

Մարքեթինգին վերաբերող պահանջները ավելի մանրամասն ներկայացված են PR-ARM-011 «Մարքեթինգային ծրագրերի վերահսկողությունը» գործընթացի կանոնակարգում և PL-ARM-054 «Ուղիղ կոնտակտների կառավարումը» քաղաքականությունում:



Արգելվում է իրականացնել մարքեթինգային միջոցառումներ՝ անօրինական ազդեցություն գործելու նպատակով:

6.11. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄ

Բոլոր ֆինանսական գործարքները, հաշվապահական հաշվառման գրանցումներն ու մուտքագրումները պետք է հավաստի կերպով և բավականաչափ մանրամասն արտացոլվեն Ընկերության հաշվապահական հաշվետվություններում, ձևակերպվեն փաստաթղթերով և հասանելի լինեն ստուգման համար:

Ընկերությունում մշակվել և ներդրվել են ներքին ֆինանսական վերահսկողություն ընթացակարգեր, որոնց նպատակն է ապահովել հետևյալը.

(1) ֆինանսական գործարքների իրականացումը ղեկավարության ընդհանուր կամ հատուկ թույլտվությամբ,

2) հաշվապահական հաշվառման գրառումների ճշգրտությունն ու ամբողջականությունը, որոնք հնարավորություն են տալիս կազմել հաշվապահական հաշվառման (ֆինանսական) հաշվետվության կիրառելի ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ,

(3) ակտիվների տնօրինման իրավունքը միայն ղեկավարության ընդհանուր կամ հատուկ թույլտվությամբ,

4) ակտիվների արժեքի և կազմի հաշվապահական հաշվառման գրառումների կանոնավոր համեմատումը փաստացի արժեքի և կազմի հետ:

Ընկերությունը նշանակել է աշխատակիցներ, ում անմիջական պարտականությունն է կիրառվող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ամբողջական և հավաստի հաշվապահական հաշվետվությունների պատրաստումը և տրամադրումը:



Ներքին ֆինանսական վերահսկողության ընթացակարգերի խախտումը կամ խախտման փորձը, Ընկերության հաշվապահական հաշվետվությունների աղավաղումը կամ կեղծումը արգելվում են:

7.12. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸնկերությունը պարտավոր է վարել ճշգրիտ հաշվապահական գրառումներ, հաշվառման փաստաթղթեր և հաշվապահական հաշվառման տվյալներ, որոնք ամբողջությամբ, ճշգրիտ և արժանահավատ կերպով արտացոլում են բոլոր գործարքներն ու ակտիվների հետ կատարվող գործողությունները: Չի թույլատրվում ստեղծել կամ վարել որևէ չբացահայտված, հաշվապահական հաշվառման մեջ չարտացոլված (off-the-books) կամ չգրանցված հաշիվ, դրամական միջոց կամ գործարք: Բոլոր գործարքները պետք է պատշաճ կերպով հաստատվեն, հիմնավորվեն համապատասխան փաստաթղթերով և իրականացվեն Ընկերության ներքին վերահսկողության համակարգի պահանջներին համապատասխան: Կեղծ, ապակողմնորոշող, ոչ ամբողջական կամ արհեստական հաշվապահական գրառումների կամ փաստաթղթերի ստեղծումը կամ վարումը խստիվ արգելվում է:

7. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7.1. Այն աշխատակիցները, կառավարման մարմինների անդամները և Ընկերության այլ մարմինները, որոնք տեղեկացել են կամ հիմքեր ունեն ենթադրելու, որ խախտվել են սույն Քաղաքականության և կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության սկզբունքները կամ պահանջները, պետք է անմիջապես այդ մասին զեկուցեն նշված եղանակներից որևէ մեկով.

- *Անմիջական ղեկավարին, կամ եթե սույն զեկույցը վերաբերում է Անմիջական ղեկավարի կողմից կատարված գործողություններին, էլ ավելի վերադաս ղեկավարին (ցանկացած տարբերակով),*
- *Ուղարկելով էլեկտրոնային նամակ Թեժ գիծ՝ hotline@viva.am ;*
- *Համապատասխանության գծով ղեկավարին (ցանկացած տարբերակով),*
- *Մեր Մոլորակը կորպորատիվ հարթակում տեղակայված Թեժ գծի էլեկտրոնային ձևանմուշի միջոցով (անանուն կամ սեփական անունից),*
- *Viva-ի պաշտոնական կայքում միասնական թեժ գծի էլեկտրոնային ձևի միջոցով՝ www.viva.am (անանուն կամ իր անունից):*

Կապալառուները կարող են խախտման մասին հաղորդել հետեւյալ եղանակներից որևէ մեկով.

- *Ուղարկելով էլեկտրոնային նամակ Թեժ գիծ՝ **hotline@viva.am;***
- *Viva-ի պաշտոնական կայքում միասնական թեժ գծի էլեկտրոնային ձևի միջոցով՝ www.viva.am (անանուն կամ իր անունից):*

7.2. Ընկերությունը, իր ներքին կանոնակարգերին համապատասխան, ապահովում է Քաղաքականության պահանջների խախտման վերաբերյալ բոլոր զեկույցների անկախ և համապարփակ վերանայում:

7.3. Ընկերությունն արգելում է հետապնդման (պատժամիջոցները) ցանկացած ձև այն անձանց նկատմամբ, որոնց վրա տարածվում են սույն Քաղաքականության դրույթները, և որոնք բարեխղճորեն հայտնել են խախտման մասին, աջակցել են հետաքննությանը և հրաժարվել են մասնակցել սույն Քաղաքականության, ինչպես նաև Գործարար վարքագծի և էթիկայի սկզբունքներին կամ պահանջներին հակասող գործունեությանը:

7.4. Ցանկացած անձի համնդեպ, որի վրա տարածվում են սույն Քաղաքականությունը ու ով խախտել է դրա պահանջները, կարող է կիրառվել պատժամիջոցներ՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում և/կամ պայմանագրի խզում՝ այդ պայմանագրի և կիրառելի օրենսդրության դրույթներին համապատասխան:

Խախտումների մասին զեկուցման պահանջները առավել մանրամասնորեն ներկայացված են PR-ARM-319 «Վիվա Արմենիա Թեժ գիծ ստացված հաղորդագրությունների վարում», PR-ARM-053 «Ծառայողական քննության անցկացում» գործընթացի կանոնակարգերում:

8. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Անձինք, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը, անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից, պատասխանատվություն են կրում սույն Քաղաքականության և Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության սկզբունքները և պահանջները պահպանելու համար, ինչպես նաև իրենց ենթակաների՝ Քաղաքականության խախտմանը հանգեցրած գործողությունները ոչ պատշաճ վերահսկելու համար:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքականության կիրառության հետ կապված խորհրդատվություն ստանալու համար պետք է դիմել Համապատասխանության գծով ղեկավարին, նաև compliance@viva.am էլ. փոստի հասցեին գրելու միջոցով:

Ընկերության հակակոռուպցիոն համապատասխանության Ծրագրի ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը, հաճախ տրվող հարցերի պատասխանները, ինչպես նաև հանձնարարելի Հակակոռուպցիոն դրույթի տեքստը տեղադրված են Ընկերության Միասնական տեղեկատվական պորտալի «Հակակոռուպցիոն քաղաքականություն և գործարար էթիկա» բաժնում:

10. ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

10.1. Արտաքին փաստաթղթեր

No.	Փաստաթղթի անվանում	Ներքին պորտալի հղում
	ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ **272–277, 296 and 435–445**	
	ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք	
	Foreign Corrupt Practices Act 1977 (FCPA) as passed by the US Congress in 1977.	
	The UK Bribery Act 2010 as passed by the Parliament of Great Britain in 2010.	
	US Federal Sentencing Guidelines Manual, §8B2.1., 2010	
	The Bribery Act 2010 Guidance, 2011	
	A Resource Guide to the U.S. Foreign Corrupt Practices Act, 2020	
	Evaluation of Corporate Compliance Programs, U.S. Department of Justice Criminal Division, 2020	
	Միջազգային առևտրային գործարքներում օտարերկրյա պաշտոնյաների կաշառակերության դեմ պայքարի մասին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության 1997 թ-ին ընունված կոնվենցիա	
	Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2003 թ	
	Կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության մասին կոնվենցիա, 1999 թ	